ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստատման 25-ամեակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական բարձր գնահատանքով Մեր օրհնութիւնն ենք բերում հիմնադրամի նախկին և ներկայ յարգարժան հոգաբարձուներին, գործադիր տնօրէններին, բարձրապատիւ բարերարներին, նուիրատու և աջակից անդամներին, տեղական մարմինների բարեջան պատասխանատուներին և համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս և ի սփիւռս:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը իր բազմարդիւն գործունէութեամբ մեր ժողովրդի մեծ ձեռքբերումներից է: Հայաստանում և Արցախում մեր անկախ պետականութեան վերահաստատումից յետոյ հիմնադրամը բացառիկ դերակատարութիւն է ունեցել հայրենական կեանքում կենսական նշանակութիւն ունեցող խնդիրների վճռման գործում՝ կենտրոնացնելով և ուղղորդելով մեր ժողովրդի հնարաւորութիւններն ու ջանքերը: Հիմնադրամի գործունէութիւնն ուղղուած է եղել ոչ միայն մեր պետականութեան առջև ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը, այլև՝ մեր երկրի արագընթաց զարգացմանը, բարեկարգմանն ու բարգաւաճմանը: Այս տեսլականով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստատումը Հայրապետական Կոնդակով օրհնեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը:

Այսօր ուրախութեամբ ենք անդրադառնում կեանքի կոչուած ծաւալուն հարիւրաւոր ծրագրերին, որոնց շուրջ համախմբուեցին և իրենց

աւանդն ու մասնակցութիւնը բերեցին հայորդիք աշխարհի բոլոր կողմերում: Քաջալեր հոգով տարեցտարի ականատեսը եղանք այն խանդավառութեանը, որով արձագանքել են մեր ժողովրդի զաւակները հիմնադրամի դրամահաւաքին և ծրագրերի իրագործման աշխատանքներին՝ հիմնադրամի առաքելութիւնը դարձնելով յոյսի, ապագայի հանդէպ լաւատեսութեան և նոր հեռանկարների ճանապարհ: Արդարև, «Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-րդ տարեդարձը պանծացումն է նաև մեր ժողովրդի հայրենասէր ու ազգասէր ոգու, միասնականութեան, հայրենիքով համախմբման և հզօր հայրենիք ունենալու նախանձախնդրութեան:

Կարևորելով հիմնադրամի հայրենաշէն առաքելութիւնը՝ Մենք ամենամեայ Մեր յորդորն ենք ուղղում մեր ժողովրդին և եկեղեցական մեր կառոյցներին՝ մասնակցութիւն բերելու և աջակցելու հիմնադրամի գործունէութեանը: Ողորմած Աստուծոյ հանապազ օրհնութիւնն ենք հայցում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կայացմանը նպաստած բոլոր երախտաւորներին ու բարերարներին և աղօթում, որ մեր ժողովուրդը կորովաշատ ոգով և հաստատուն քայլերով ընթանայ դէպի իր հայրենաշէն իղձերի ու նպատակների իրականացում:

Թող Բարերար Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ պահի մեր հայրենիքն ու աշխարհասփիւռ ժողովրդին և պարգևի մեր կեանքին նոր ձեռքբերումներ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 6-ն Փետրուարի
յամի Տեառն 2017 և ի թուին հայոց ՌՆԿԶ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1787